«ՈՒՐԲԱՆ» ԿԱՅՈՒՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

Ռազմավարական պլան 2024–2028

Արժանապատիվ կյանք՝ առողջ միջավայրում

«Ուրբան» կայուն զարգացման հիմնադրամը («Ուրբան» հիմնադրամ) ստեղծվել է 2004 թվականին: Այն շահույթ չհետապնդող կազմակերպություն է՝ որի գործունեությունն ուղղված է կայուն, ներառական և մարդակենտրոն համայնքային զարգացմանը: Առաջնորդվելով առողջ միջավայրում արժանապատիվ կյանք ապահովելու տեսլականով՝ «Ուրբան» հիմնադրամը նպաստում է տեղական ժողովրդավարության ամրապնդմանը, շրջակա միջավայրի պահպանությանը և համայնքների դիմակայունությանը՝ աջակցելով քաղաքացիներին, համայնքապետարաններին, քաղաքացիական հասարակությանը, երիտասարդությանը և խոցելի այլ խմբերին Հայաստանի գյուղական, քաղաքային, հեռավոր և սահմանամերձ համայնքներում: Իր գործունեության ընթացքում «Ուրբան» հիմնադրամը ձևավորել է վստահելի համագործակցություն ԱՄՆ ՄԶԳ-ի, ԵՄ-ի, Համաշխարհային բանկի, Եվրոպայի խորհրդի, ԵԱՀԿ-ի և ՄԱԿ-ի տարբեր գործակալությունների հետ:

ՏԵՍԼԱԿԱՆ

Արժանապատիվ կյանք՝ առողջ միջավայրում, յուրաքանչյուր համայնքի համար:

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆ

Ամրապնդել տեղական ժողովրդավարությունը, նպաստել շրջակա միջավայրի պահպանությանը և համայնքների դիմակայունությանը՝ աջակցելով քաղաքացիներին, համայնքապետարաններին, քաղաքացիական հասարակությանը, երիտասարդությանը և խոցելի խմբերին զարգացնելու համայնքները:

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ինտեգրված, կլիմայական դիմակայուն համայնքային զարգացում

Ժողովրդավարական, մասնակցային տեղական կառավարում

Տարածաշրջանային համագործակցություն և գիտելիքի փոխանակում

Ինստիտուցիոնալ հզորություն և ֆինանսական կայունություն

ԾՐԱԳՐԱՅԻՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Տեղական ինքնակառավարում և մասնակցություն
- Բնակարանային ֆոնդ և ենթակառուցվածք
- Շրջակա միջավայր և կլիմայական գործողություններ
- Ջրային ռեսուրսների կառավարում
- Քաղաքացիական հասարակություն և երիտասարդության հզորացում
- Տարածաշրջանային գիտելիք և քաղաքականության ազդեցություն

Ռազմավարական նպատակներ և խնդիրներ

7 ՆՊԱՏԱԿ · 2024–2028

ԱՐՏԱՔԻՆ - ՀԱՄԱՅՆՔ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆ

01 Ինտեգրված համայնքային զարգացում

- Ամրապնդել դիմակայուն, կլիմայի փոփոխություններին արձագանքող և մարդակենտրոն համայնքային ծառայությունների մատուցման ինստիտուցիոնալ կարողությունը:
- Խթանել անվտանգ, ներառական և կլիմայական դիմակայուն քաղաքային ու գյուղական միջավայրերի տնտեսական զարգացմանը:

02 Ժողովրդավարացում և մարդկային ներուժ

- Բարձրացնել տեղական իշխանությունների կարողությունները մասնակցային, թափանցիկ և հաշվետու կառավարման ոլորտում:
- Խթանել մարդու իրավունքների պաշտպանությունը՝ կանանց, երիտասարդության և խոցելի խմբերի ներգրավման միջոցով:

03 Տարածաշրջանային համագործակցություն

- Խթանել անդրսահմանային համագործակցությունը և իրականացնել դիմակայունության, կլիմայի և կառավարման ոլորտներին առնչվող տարածաշրջանային նախաձեռնություններ:
- Ընդլայնել ներգրավվածությունը տարածաշրջանի քաղաքացիական հասարակության, մասնագիտական և ակադեմիական ցանցերում:

ՆԵՐՔԻՆ. ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ՀԶՈՐՈՒԹՅՈՒՆ

04 Մարդկային կապիտալի զարգացում

- Ամրապնդել մասնագիտական, տեխնիկական, թվային և առաջնորդության կարողությունները նոր մարտահրավերներին դիմակայելու համար:
- Ինստիտուցիոնալացնել կամավորությունն ու ուսումնական պրակտիկան՝ գիտելիքի փոխանցման նպատակով:

05 Ֆինանսական կայունություն

- Դիվերսիֆիկացնել, ընդլայնել միջազգային և տեղական դոնորների ու գործընկերների ֆինանսավորման աղբյուրները:
- Մշակել եկամուտ ապահովող և սոցիալական ձեռներեցության եր երկարաժամկետ կայունության ծրագրեր:

06 Լավ կառավարում

- Պարբերաբար վերանայել ռազմավարական պլանը, քաղաքականություններն ու ընթացակարգերը՝ արդիականությունն ու արդյունավետությունն ապահովելու համար:
- Իրականացնել շահակիրների քարտեզագրում, ապահովել անվտանգ, ներառական ու ոչ խտրական աշխատանքային միջավայր:

07 Տեսանելիություն և ռազմավարական դիրքավորում

- Գործել թափանցիկ, լինել հաշվետու համայնքների, գործընկերների և դոնորների առջև:
- Ապահովել գործունեության տեսանելիություն արդյունավետ հաղորդակցության, թվային հարթակների և գիտելիքի միջոցով:

ՀԱՋՈՂՎԱԾ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բնակարանային վկայագիր խոցելի խմբերի համար

Հայաստանում առաջին անգամ բնակարանի գնման վկայագրերի ծրագիրը փորձարկվել է «Ուրբան» հիմնադրամի աշխատակազմի կողմից, որն այժմ կիրառվում է ՀՀ կառավարության կողմից:

Շրջանաձև տնտեսություն և նորարարություն

Վերամշակման մոդել համայնքներում. պլաստիկ թափոններից շինանյութի ստացում, որը օգտագործվում է հանրային ենթակառուցվածքների բարելավման նպատակով:

Տեղական կառավարում և ժողովրդավարացում

Թափանցիկ գործելակերպի, էթիկայի և քաղաքացիների մասնակցության դասընթացներ տեղական պաշտոնյաների և ՔՀԿ ներկայացուցիչների համար:

Ռազմավարական պլան 2024–2028

Արժանապատիվ կյանք՝ առողջ միջավայրում

ՈՒԹՀՍ/SWOT → Ուժեղ և թույլ կողմերի վերլուծություն

ՈՒ × Հ — Ուժեղ կողմեր × Հնարավորություններ

Օգտագործել ուժեղ կողմերը հնարավորություններից օգտվելու համար

→ «Ուրբան» հիմնադրամը՝ որպես դիմակայուն, կլիմայի փոփոխություններին արդյունավետ արձագանքող, համայնքային զարգացմանը նպաստող առաջատար կազմակերպություն

→ Ընդլայնել դոնորական և ծրագրային պորտֆելները կլիմայի, դիմակայունության և կառավարման ոլորտներում

ՈՒ × Ս — Ուժեղ կողմեր × Սպառնալիքներ

Օգտագործել ուժեղ կողմերը արտաքին սպառնալիքները մեղմելու համար

→ Բարձրացնել ցնցումների հանդեպ ծրագրերի դիմակայունությունը և հարմարվողականությունը

→ Խորացնել գործընկերությունը համայնքապետարանների և ՔՀԿ-ների հետ

Թ × Հ — Թույլ կողմեր × Հնարավորություններ

Օգտագործել հնարավորությունները ներքին թույլ կողմերը հաղթահարելու համար

→ Մշակել ֆինանսական կայունության և բիզնես գործունեության ռազմավարություն

→ Ինստիտուցիոնալացնել գիտելիքի կառավարումը և ուսուցումը

Թ × Ս — Թույլ կողմեր × Սպառնալիքներ

Նվազեցնել թույլ կողմերը՝ ռիսկերի ազդեցությունը սահմանափակելու համար

→ Նվազեցնել կախվածությունը ֆինանսավորման մեկ աղբյուրից

→ Ամրապնդել կազմակերպության դիմակայունությունը և ապահովել կենսունակությունը

ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

Ֆինանսական	**ՌԻՍԿ:** Դոնորական ֆինանսավորման անկայունություն, սահմանափակ համաֆինանսավորում	**ՄԵՂՄՈՒՄ:** Դիվերսիֆիկացնել ֆինանսավորման աղբյուրները, զարգացնել վճարովի ծառայությունները
Ինստիտուցիոնալ	**ՌԻՍԿ:** Հիմնական կադրերից գերկախվածություն, գրասենյակային ենթակառուցվածքի բացակայություն	**ՄԵՂՄՈՒՄ:** Ապահովել իրավահաջորդությունը և կազմակերպության կենսունակությունը
Արտաքին / Կլիմայական	**ՌԻՍԿ:** Խոցելի համայնքներում կլիմայական և աղետների ռիսկերի աճ	**ՄԵՂՄՈՒՄ:** Ներդնել աղետների ռիսկի նվազեցման և կլիմայական ռիսկի վերլուծությունը ծրագրերում

2024-2028թթ. ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ա — Ինստիտուցիոնալ զարգացում և կազմակերպական դիմակայունություն
Կառավարման համակարգեր, աշխատակազմի կարողություն, թվային կառավարում և կայունության պլանավորում

Բ — Ցանցային և տարածաշրջանային համագործակցություն, գիտելիքի փոխանակում
Գործընկերների հետ գիտելիքի փոխանակում, ցանցային, ակադեմիական և անդրսահմանային համագործակցություն

Գ — Խորհրդատվական և վճարովի ծառայություններ
Ֆինանսական կայունություն եկամուտ ապահովող ծառայությունների միջոցով

Դ — Համայնքային զարգացում, դիմակայունություն և կլիմայի փոփոխություններին արձագանքող գործողություններ
Մասնակցային համայնքային զարգացում, աղետների ռիսկի նվազեցում, ջրային ոլորտի կառավարում և ենթակառուցվածքներ

Ե — Տեսանելիություն, հանրային կապեր և կազմակերպության հեղինակություն
Առցանց հարթակներ, հաղորդակցություն և հաշվետվողականություն հանրությանը

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Ֆինանսական հաստատություններ և դոնորներ

↓

Հոգաբարձուների խորհուրդ

↓

Գործադիր տնօրեն

↓

Ծրագրերի բաժին | **Ֆինանսական բաժին** | **Վարչական բաժին**

ՇԱՀԱԿԻՐ ԿՈՂՄԵՐ

- Պետական և տեղական իշխանություններ
- Քաղաքացիներ և համայնքներ
- ՔՀԿ-ներ
- Մասնավոր հատված
- Լրատվամիջոցներ
- Միջազգային դոնորներ և դեսպանատներ

Հոգաբարձուների խորհուրդն ապահովում է կազմակերպության ռազմավարական վերահսկողությունը և քաղաքականության հաստատումը. Գործադիր տնօրենը ղեկավարում է կազմակերպության ծրագրային, ֆինանսական և վարչական գործունեությունը: Ծրագրերի իրականացման ողջ ընթացքում պահպանվում է երկկողմ հաղորդակցություն կառավարության, համայնքապետարանների, ՔՀԿ-ների և մասնավոր հատվածի միջև: